ՆԱԽԱԳԻԾ
ԱՐՁԱՆԱԳՐԱՅԻՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

---

1. Հավանություն տալ Գիտության ոլորտի զարգացման ռազմավարությանը՝ համաձայն հավելվածի։

2. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարին՝ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ մշակել և մինչև 2010 թվականի նոյեմբերի առաջին տասնօրյակը Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել «Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման 2011–2015 թվականների ռազմավարական ծրագիրը և միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասինե Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը։

ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյան

Հավելված
ՀՀ կառավարության
2010 թ.---ի N արձանագրային որոշման

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

1.ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման ռազմավարությունը (այսուհետ՝ ռազմավարություն) ամրագրում է 2011-2020 թվականներին գիտության ոլորտի հեռանկարային զարգացմանն ուղղված պետական քաղաքականությունը: Ռազմավարությունը Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի ներկա վիճակի, առկա հիմնախնդիրների, հեռանկարային զարգացման նպատակների և ուղղությունների վերաբերյալ դրույթների ամբողջություն է:

Ռազմավարությունը հիմք է հանդիսանում Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման 2011-2015 և 2016-2020 թվականների ռազմավարական ծրագրերի մշակման համար: Այդ ծրագրերը ապահովելու են Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի դինամիկ և նպատակաուղղված զարգացումը և իրականացվելու են կառավարության, մասնավոր բիզնեսի, քաղաքացիական հասարակության ինստիտուտների և սփյուռքի ջանքերի զուգակցմամբ:

2. ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Անկախության տարիներին որոշակիորեն պահպանվել են հանրապետության գիտական ներուժը, գիտական կազմակերպությունները և դպրոցները, ձեռք են բերվել որոշակի նվաճումներ գիտական և գիտատեխնիկական գործունեության տարբեր բնագավառներում: Ներկայում գիտության ոլորտում գոյություն ունեն հետևյալ դրական գործոնները.

- 2009 թվականի պետական բյուջեում գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի գծով հատկացումները կազմել են 8 374 626.9 հազար դրամ, որը 2001 թվականի համեմատությամբ ավելացել է ավելի քան 3 անգամ: 2008-2009 թվականներին միջազգային դրամաշնորհներով (FP6, FP7, INTAS, CRDF, ISTC, NATO և այլն) իրականացվել է տարեկան 20 հազար ԱՄՆ դոլարը գերազանցող ավելի քան 50 գիտական ծրագիր, որոնց ֆինանսավորման ընդհանուր ծավալները կազմել են տարեկան շուրջ 7 մլն ԱՄՆ դոլար:
- Հանրապետության գիտական և գիտակրթական կազմակերպություններում գիտական գործունեությամբ զբաղվում է շուրջ 17 հազար մարդ: Պետական բյուջեից ֆինանսավորվող գիտական ծրագրերում և թեմաներում ընդգրկված է շուրջ 7.5 հազար գիտնական և գիտական

աշխատող, որոնցից 3075-ը ունի գիտական աստիճան (տե՛ս Աղյուսակ 1)։ 2008 թվականին պաշտպանվել են 520 թեկնածուական և 46 դոկտորական ատենախոսություններ՝ գիտության 20 մասնագիտությունների գծով։ 2009 թվականի դրությամբ ասպիրանտական համակարգում ընդգրկված է 1389 ասպիրանտ, որոնցից 678-ը՝ առկա և 711-ը՝ հեռակա ուսուցմամբ։

- Ներդրվել է պետական բյուջեից գիտական ծրագրերի և թեմաների մրցութային և ծրագրային ֆինանսավորման համակարգը։ 2009 թվականին պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվում են նպատակային-ծրագրային հետազոտությունների՝ 6, գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման և զարգացման՝ 86, հիմնարար և կարևորագույն նշանակություն ունեցող կիրառական հետազոտությունների՝ 85, ազգային արժեք ներկայացնող գիտական օբյեկտների պահպանության՝ 3 ծրագրեր և պայմանագրային (թեմատիկ) հետազոտությունների՝ 710 թեմաներ։ Գիտական ծրագրերը և թեմաներն իրականացվում են 116 գիտական և գիտակրթական կազմակերպություններում, որոնք ներկայացնում են Գիտությունների ազգային ակադեմիան, 11 նախարարություն, Երևանի քաղաքապետարանը և ընդհանուր թվով 17 այլ կազմակերպություն՝ 2 ՊՈԱԿ, 1 ԲԲԸ, 3 ՓԲԸ, 10 ՍՊԸ և 1 ՀԿ (տե՛ս Աղյուսակ 1)։ Ընդհանուր առմամբ այդ 116 կազմակերպություններից 66-ը ՊՈԱԿ է, 31-ը՝ ՓԲԸ, 11-ը՝ ՍՊԸ, 2-ը՝ ՊՓԲԸ, 3-ը՝ ԲԲԸ և 3-ը՝ ՀԿ։ 2 պայմանագրային (թեմատիկ) թեմա իրականացնում են անհատ կատարողներ։

- Կատարելագործվել է գիտական և գիտատեխնիկական գործունեության օրենսդրական և նորմատիվ-իրավական դաշտը, ստեղծվել են ավելի քան 30 ոչ պետական գիտական կազմակերպություններ, գիտական հիմնադրամներ և հասարակական կազմակերպություններ, որոնցից 17-ը պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացնում են գիտական ծրագրեր։

- Ընդլայնվել է գիտական կազմակերպությունների ինքնուրույնությունը։ Պետական գիտական կազմակերպությունների տնտեսական և այլ ծախսերը 2009 թվականի պետական բյուջեով ավելի քան կրկնապատկվել են։

Հ/հ	Գերատեսչություն	Կազմ. քանակը	Գիտ. աստ. ունեցողների քանակը	
			դոկտոր	թեկնածու
1	Գիտությունների ազգային ակադեմիա	35	265	1001
2	Կրթության և գիտության նախարարություն	17	298	854
3	Առողջապահության նախարարություն	13	35	84
4	Էկոնոմիկայի նախարարություն	9	42	158
5	Գյուղատնտեսության նախարարություն	9	24	127
6	Մշակույթի նախարարություն	6	5	20

7	Բնապահպանության նախարարություն	2	2	3
8	Պաշտպանության նախարարություն	2	2	2
9	Քաղաքաշինության նախարարություն	1	1	4
10	Էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	1	1	2
11	Տարածքային կառավարման նախարարություն	1	1	9
12	Արտակարգ իրավիճակների նախարարություն	1	3	5
13	Երևանի քաղաքապետարան	2	7	24
14	Այլ կազմակերպություններ	17	28	68
15	Անհատ կատարող	-	1	1
16	Ընդամենը	116	714	2361

Աղյուսակ 1. 2009 թվականի տվյալներով պետական գիտական ծրագրերի և թեմաների իրականացման մեջ ներգրավված կազմակերպությունները և գիտական աստիճան ունեցող կատարողները։

- Գիտության ոլորտի երիտասարդացման քաղաքականության շրջանակներում 2008-2009 թվականներին կազմակերպվել է 4 երիտասարդական ամառային դպրոց, որին մասնակցել է ավելի քան 150 երիտասարդ գիտնական և ասպիրանտ։ Պետական բյուջեի ֆինանսավորմամբ ապահովվել է 6 երիտասարդ գիտնականների և ասպիրանտների մասնակցությունը միջազգային գիտաժողովներին։

- Ընդհանուր առմամբ 2008-2009 թվականներին պետական բյուջեի ֆինանսավորմամբ ապահովվել է բարձր վարկանիշ ունեցող 20 գիտնականի մասնակցությունը միջազգային գիտաժողովների, սեմինարների և խորհրդակցությունների աշխատանքներին։ Պետական աջակցություն է ստացել հանրապետությունում կազմակերպված միջազգային նշանակության 25 գիտաժողով։

- 2008-2009 թվականներին ստեղծվել է անկախ գիտական փորձաքննության համակարգը, որում ընգրկվել է շուրջ 1200 գիտնական՝ հանրապետությունից և օտարերկրյա պետություններից։

- 2008 թվականից առանձնակի ուշադրություն է դարձվել հայագիտությանը։ Մասնավորապես, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտում (Մատենադարան) և Գիտությունների ազգային ակադեմիայի Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում տնտեսական ծախսերի ավելացման հետ մեկտեղ, ավելի քան 40% ավելացվել է մեկ հաստիքի հաշվարկով միջին աշխատավարձը։ 2008-2009 թվականներին հայագիտական հետազոտական ծրագրերն ավելացել են երեքով, այդ թվում՝ մեկ պետական նպատակային ծրագիր։

- Գիտական որոշ ուղղություններ իրենց ուրույն տեղն ունեն միջազգային գիտական և գիտակրթական տարածքում, ընդլայնվել է միջազգային համագործակցությունը: 2008-2009 թվականներին ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի կողմից ստորագրվել են գիտական և գիտատեխնիկական գործունեության ոլորտում համագործակցության հուշագրեր և համաձայնագրեր Ռուսաստանի Դաշնության հիմնարար հետազոտությունների հիմնադրամի, Ֆրանսիայի Հանրապետության գիտական հետազոտությունների ազգային կենտրոնի, Բելառուսի Հանրապետության գիտության և տեխնոլոգիաների պետական կոմիտեի և Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի հետ:

- Հանրապետության գիտնականների հեղինակությամբ կամ համահեղինակությամբ իրականացվել են միջազգային բարձր մակարդակին համապատասխանող մի շարք աշխատանքներ, որոնք հրատարակվել են հեղինակավոր գիտական ամսագրերում: Գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող կազմակերպությունների անձնագրային տվյալներով՝ 2007 թվականին հանրապետության գիտնականների հեղինակությամբ կամ համահեղինակությամբ հանրապետական և օտարերկրյա գրախոսվող պարբերականներում հրատարակվել է 5569 աշխատություն (ներառյալ գիտական կազմակերպությունների համատեղ աշխատանքները), ստացվել է հեղինակային իրավունքի 181 վկայագիր, որից 3-ը՝ օտարերկրյա պետություններում: Ընդ որում, 492 աշխատություն հրատարակվել է միջազգային առաջատար գիտատեղեկատվական և գիտավերլուծական կայքերում ընդգրկված ամսագրերում (ըստ «Թոմսոն Ռոյթերե կայքի): Այդպիսի հոդվածների ընդհանուր քանակը 1991-2008 թվականների ընթացքում կազմել է 6171 (տե՛ս Նկար 1).



Նկար 1. 1991-2008 թվականների ընթացքում հանրապետության գիտնականների և գիտական աշխատողների հեղին ակությամբ կամ համահեղինակությամբ հրատարակված և միջազգային առաջատար գիտատեղեկատվական կայքերում ընդգրկված հոդվածների քանակը՝ ըստ տարիների:

- Մի շարք գիտնականներ արժանացել են բարձր գնահատականի և մրցանակների, ինչպես հանրապետությունում, այնպես էլ միջազգային ասպարեզում. վերջին 5 տարվա ընթացքում գիտության բնագավառի ներկայացուցիչներին շնորհվել է Հայաստանի Հանրապետության Նախագահի 30 և շուրջ 100 միջազգային մրցանակ:

Այս բոլորով հանդերձ սակայն, գիտության ոլորտում արմատական բարեփոխումների ձգձգումը հանգեցրել է բազմաթիվ խնդիրների: Դրանց պատճառներն են՝

- խորհրդային ժամանակների համեմատ ֆինանսավորման կտրուկ կրճատումը և դրա ցածր արդյունավետությունը,

- պետական առաջնահերթությունների բացակայությունը,

- գիտական ներուժի զարգացման և վերարտադրության հնարավորության սահմանափակումը,

- առկա նյութատեխնիկական բազայի և ենթակառուցվածքների անբավարար մակարդակը,

- գիտական արդյունքների ներդրման և առևտրայնացման համակարգի դանդաղ ձևավորումը:

Ներկայում գիտության ոլորտում առկա են հետևյալ հիմնախնդիրները.

- Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ոլորտի պետական քաղաքականության մշակումը և աշխատանքների կազմակերպումը չեն իրականացվել բավարար ձևով՝ հաշվի առնելով ոլորտի կայուն զարգացումն ապահովող համակարգի ձևավորման պահանջները: Խզվել է հիմնարար հետազոտություններ-կիրառական հետազոտություններ-ինովացիոն գործունեություն կապը, հետազոտություններում մեծ թիվ են կազմում թեմատիկ կրկնությունները և տեղի է ունենում պետական սուղ միջոցների փոշիացում:

- Առկա նյութատեխնիկական բազան և ենթակառուցվածքները չեն ապահովում գիտական ներուժի արդյունավետ օգտագործումը: Գիտական սարքավորումների բացարձակ մեծամասնությունը հնացած է, նրանց տեխնիկական վիճակը հնարավորություն չի տալիս իրականացնելու բարձր մակարդակի գիտական, հատկապես կիրառական բնույթի հետազոտություններ, իսկ պահպանումը և շահագործումը պահանջում են մեծ ֆինանսական միջոցներ: Գրեթե բացակայում է ԽՍՀՄ-ում երբեմնի մեծ համբավ վայելող գիտական սարքաշինությունը:

- Բացակայում է ներհանրապետական գիտատեղեկատվական միասնական համակարգը՝ ներառյալ էլեկտրոնային գրադարանների ցանցը: Չկա միջազգային գիտատեղեկատվական ցանցից ազատ օգտվելու համակարգված հնարավորություն: Գիտահիրատարակչական գործունեությունը չի բավարարում միջազգային չափանիշներին, բարձր վարկանիշ ունեցող

միջազգային գիտատեղեկատվական ցանկերում փոքր թիվ են կազմում հանրապետական գիտական պարբերականները։

- Շարունակվում է բարձր որակավորում ունեցող կադրերի արտահոսքը գիտության ոլորտից՝ 1991-2008 թվականների ընթացքում շուրջ 2 անգամ պակասել է պետական ծրագրերում և թեմաներում ընդգրկված գիտական աստիճան ունեցողների թվաքանակը։ Բացակայում է երիտասարդ կադրերի ներգրավման և հաստատման պետական նպատակային քաղաքականությունը, շարունակվում է ոլորտի «ծերացումը։ Գիտական կադրերի պատրաստման պետական պատվերի ձևավորումը կատարվում է տարերայնորեն՝ չունի լուրջ գիտական հիմնավորում, և հաշվի չի առնվում պահանջարկ-առաջարկ կապը։

- Հանրապետությունում խորհրդային ժամանակներում ձևավորված գիտական ավանդույթները և միջազգային ճանաչում ունեցող մի շարք գիտական դպրոցներ կորցրել են իրենց երբեմնի բարձր դիրքերը, խաթարվել է գիտական դպրոցների սահուն և նպատակային սերնդափոխության գործընթացը։

- Ըստ հանրապետության գիտության և տեխնիկայի զարգացման գերակա ուղղությունների, գիտական ներուժի օպտիմալ օգտագործման հնարավորության և միջազգային գիտական «շուկայումե ունեցած պահանջարկի՝ ընտրված չեն հիմնարար հետազոտությունների առաջնայնությունները։ Բացակայում է տնտեսության այս կամ այն ոլորտի զարգացմանն ուղղված հետազոտությունների պետական պատվերը։ Կիրառական հետազոտությունների ենթակառուցվածքները չեն համապատասխանում միջազգային չափանիշներին։ Բավարար ուշադրություն չի դարձվում գիտական արդյունքի ապրանքայնացման և այլ երկրներում դրանց իրացման խնդիրներին։

- Չհստակեցված գիտական և գիտատեխնիկական քաղաքականության պայմաններում, դժվարությամբ են ընթանում գիտության ոլորտի բարեփոխումները, դանդաղ է ձևավորվում կրթության, գիտության, տեխնոլոգիայի և ինովացիայի ներդաշնակ փոխկապակցված համակարգը։

- Տնտեսական և հասարակական զարգացումներում նպատակների նախանշումը և ձեռքբերումը չի իրականացվում թափանցիկ ձևով, փոխադարձ քննարկումների հիման վրա։

- Չեն հստակեցվել միջազգային համագործակցության պետական առաջնայնությունները, այն հիմնականում իրականացվում է կազմակերպությունների կամ առանձին գիտնականների նախաձեռնությամբ և կրում է տարերային ու խիստ անձնավորված բնույթ։ Քիչ են համաֆինանսավորման սկզբունքով իրականացվող (հատկապես՝ կիրառական բնույթի) միջազգային գործընկերային ծրագրերը, որոնք մեծ հավանականությամբ կարող են հանգեցնել առևտրայնացման ենթակա արդյունքների։

- Հայաստանյան և օտարերկրյա, հատկապես, սփյուռքի հայագիտական կառույցների թույլ կապերը, միասնական գիտատեղեկատվական դաշտի և հայագիտական հանդեսի բացակայությունը լրջորեն խաթարում են միջազգային չափանիշներին բավարարող աշխատանքների իրականացումը և էականորեն թուլացնում հայագիտությունը միջազգային գիտական նշանակության ուղղություն դարձնելու ջանքերը:

- Հասարակական գիտակցության մեջ նվազել է գիտության հեղինակությունը և գիտական աշխատողի մասնագիտական կարիերայի գրավչությունը:

- Անկախության տարիներին, հայտնի պատճառներով, չի իրականացվել գիտության և տեխնիկայի զարգացմանը նոր թափ հաղորդող որևէ նշանակալից ծրագիր, որը էապես կնպաստեր հանրապետության գիտության, տեխնիկայի և տնտեսության զարգացմանը, միջազգային գիտակրթական և գիտատեխնիկական տարածքում հանրապետության համար կապահովեր առաջատար դիրք՝ որևէ ուղղության կամ ուղղությունների գծով:

Վերոնշյալ հիմնախնդիրները լուծելու, ինչպես նաև ունեցած ձեռքբերումները պահպանելու և զարգացնելու համար սահմանվել է գիտության ոլորտի զարգացման տեսլականը, ձևակերպվել են իրականացվելիք առաքելությունները, ընտրվել են հեռանկարային թիրախները և դրանց հասնելու մարտավարությունները:

3. ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գիտության ոլորտի զարգացման տեսլականը՝

2020 թվականին Հայաստանի Հանրապետությունը գիտալիքահենք տնտեսություն ունեցող, հիմնարար և կիրառական գիտական հետազոտությունների ու մշակումների մակարդակով Եվրոպական գիտատեխնիկական տարածքում մրցունակ երկիր է:

Այս տեսլականի ներքո իրականացվելիք առաքելությունները.

- ձևավորել գիտության և առաջատար տեխնոլոգիաների ոլորտի կայուն զարգացումն ապահովող համակարգ,

- արդիականացնել գիտության ոլորտի նյութատեխնիկական բազան և ենթակառուցվածքները,

- ապահովել գիտության և տեխնիկայի բնագավառի բարձր որակավորում ունեցող կադրերի թվաքանակի կայուն աճ,

- ապահովել երիտասարդ կադրերի ներհոսք գիտության ոլորտ, և իրականացնել գիտական ներուժի կառավարելի, սահուն սերնդափոխություն,

- ապահովել հիմնարար գիտական հետազոտությունների արդյունավետ պետական հովանավորություն և առաջընթաց զարգացում,

- խթանել գիտական կազմակերպություններում տնտեսության մեջ օգտագործվող գիտելիքի ձեռքբերմանն ուղղված հետազոտությունների իրականացումը, նորամուծությունների և արտոնագրերի ավելացումը,

- ձևավորել գիտության, տեխնոլոգիաների և ինովացիա պարունակող գիտելիքների զարգացումն ապահովող ներդաշնակ համակարգ՝ խթանելով մասնավոր բիզնեսի ներգրավումը դեպի գիտություն և ապահովել այդ գիտելիքների նպատակուղղված ներդրումը կրթության և տնտեսության այս կամ այն ոլորտ,

- ապահովել հայագիտության ոլորտի առաջնային զարգացումը,

- էապես ընդլայնել գիտության և տեխնոլոգիաների բնագավառում միջազգային համագործակցությունը,

- ապահովել համաշխարհային գիտական և գիտատեխնոլոգիական տարածքում Հայաստանի Հանրապետությանը վայել դիրքի ձեռքբերում ու հաստատում:

4. ԹԻՐԱԽՆԵՐԸ

ԹԻՐԱԽ 1. Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ոլորտի կայուն զարգացումն ապահովող համակարգի ձևավորում:

ԹԻՐԱԽ 2. Գիտության, կրթության և տեխնիկայի բնագավառի բարձր որակավորում ունեցող երիտասարդ կադրերի թվաքանակի կայուն աճի ապահովում, գիտության ոլորտի նյութատեխնիկական բազայի և ենթակառուցվածքի արդիականացում:

ԹԻՐԱԽ 3. Հիմնարար և կիրառական բնույթի՝ ներառյալ տնտեսության մեջ օգտագործվող գիտելիքի ձեռքբերմանն ուղղված հետազոտությունների խթանում:

ԹԻՐԱԽ 4. Կրթության, գիտության, տեխնոլոգիաների և ինովացիայի ներդաշնակ համակարգի ձևավորում, տնտեսական և հասարակական զարգացումներում գիտական հետազոտությունների դերակատարման աճի ապահովում:

ԹԻՐԱԽ 5. Հայագիտության ոլորտի առաջնային զարգացում:

ԹԻՐԱԽ 6. Միջազգային գիտական և գիտատեխնիկական համագործակցության զարգացում, համաշխարհային գիտական, գիտակրթական և գիտատեխնոլոգիական տարածքում սեփական դիրքի ձեռքբերում ու հաստատում:

5. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԹԻՐԱԽ 1. Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ոլորտի կայուն զարգացումն ապահովող համակարգի ձևավորում

Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ոլորտի կայուն զարգացումն ապահովող արդյունավետ, ճկուն համակարգի ձևավորման համար անհրաժեշտ է ներդաշնակեցնել գիտելիքի ստեղծման և կիրառման գործընթացները: Այն հնարավորություն կընձեռի, ըստ հանրապետության գիտության և տեխնիկայի զարգացման գերակա ուղղությունների ու տնտեսության պահանջարկի, կենտրոնացնելու առկա նյութատեխնիկական բազան և մարդկային ռեսուրսները, կատարելու իրապես հասցեագրված, տնտեսության պահանջներից բխող հետազոտություններ և արագացնելու առաջատար տեխնոլոգիաների կիրառությունը տնտեսության մեջ: Բացի դրանից, կբարձրանա գիտական և գիտատեխնիկական գործունեության ոլորտին հատկացվող պետական և ոչ պետական ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետությունը:

Միջոցառումների արդյունավետությունը էապես պայմանավորված է պետական բյուջեից և տնտեսության մասնավոր հատվածից հատկացվող ֆինանսական ծավալների զգալի ավելացումով (2020 թվականին այն հասցնելով ՀՆԱ-ի 1-1,5%-ի), ֆինանսավորման բազմաձևության օգտագործմամբ, նոր մեխանիզմների ներդրումով և արդյունավետության բարձրացումով:

Մարտավարություն՝

1) Անկախ գերատեսչական պատկանելությունից և սեփականության ձևից՝ գիտության և առաջատար տեխնոլոգիաների ոլորտի բոլոր մակարդակներում միասնական գիտական և գիտատեխնիկական քաղաքականության մշակում և իրականացում:

2) Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ոլորտի կայուն զարգացումն ապահովող համակարգի ձևավորում:

3) Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների համար հատկացվող պետական և ոչ պետական միջոցների էական ավելացմանը նպաստող միջոցառումների իրականացում, դրանց նպատակային-արդյունավետ օգտագործում և վերահսկում:

4) Գիտական և գիտատեխնիկական գործունեության ոլորտում ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացում և կառավարման ձևերի արդիականացում:

5) Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ու մշակումների մրցունակ ոլորտի և դրա առաջանցիկ զարգացման կայուն և անհրաժեշտ պայմանների ապահովում:

6) Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ու մշակումների արդյունքների կիրառմանն աջակցող պայմանների ստեղծում:

ԹԻՐԱԽ 2. Գիտության, կրթության և տեխնիկայի բնագավառի բարձր որակավորում ունեցող երիտասարդ կադրերի թվաքանակի կայուն աճի ապահովում, գիտության ոլորտի նյութատեխնիկական բազայի և ենթակառուցվածքի արդիականացում

Գիտության, կրթության և տեխնիկայի բնագավառը բարձր որակավորում ունեցող երիտասարդ կադրերով համալրելու և գիտական ներուժի արդյունավետ վերարտադրությունն

ապահովելու համար անհրաժեշտ է ստեղծել իրավական, տնտեսական և կազմակերպական պայմաններ ու երաշխիքներ՝ երիտասարդ կադրերի համակողմանի զարգացման, ինքնահաստատման և ինքնադրսևորման համար։ Հարկավոր է մշակել գիտական և գիտատեխնիկական կադրերի պատրաստման հիմնավորված ծրագիր՝ նպատակ ունենալով ստեղծել գիտելիքահենք տնտեսության ու հասարակության հիմքը հանդիսացող բարձր կրթական և մասնագիտական մակարդակ ունեցող կադրերի ինքնավերարտադրվող համակարգ։ Բացի այդ, պետք է նաև իրականացնել միջոցառումներ՝ լրացնելու միջին սերնդի գիտնականների թվաքանակի այն «բացը, որն առաջացել է գիտության ոլորտից մինչ այժմ շարունակվող կադրերի արտահոսքից, այդ թվում նաև՝ արտերկիր։

Համաշխարհային տնտեսության գլոբալիզացիայի պայմաններում, երբ օրեցօր սրվում են սպառողական պահանջարկի աճի և բնական ռեսուրսների նվազմամբ պայմանավորված հակասությունները, էապես բարդանում են նաև ազգային անվտանգության հիմնահարցերը։ Այս պայմաններում զգալիորեն ավելանում է բարձր կրթական մակարդակ ունեցող մասնագետների պահանջարկը, մասնագետներ, որոնք ի վիճակի պետք է լինեն մասնակցելու նոր գիտելիքների և տեխնոլոգիաների ստեղծմանն ու դրանց արդյունավետ օգտագործմանը։ Այս իմաստով հանրապետության համար սկզբունքային է դառնում բարձր որակավորում ունեցող մասնագետների ներուժի նպատակային օգտագործումը՝ չբացառելով գիտելիքի առևտրայնացման ասպարեզում վերջիններիս սեփական դերակատարումն ունենալու հավակնությունը, ինչպես նաև գիտնականի ազատ տեղաշարժի՝ միջազգայնորեն ընդունված իրավունքի հարգումը։ Բացառիկ ռազմավարական կարևորություն է ստանում բարձր կրթական մակարդակ ունեցող մարդկանց անկառավարելի արտահոսքից ներհոսքի անցնելու խնդիրը։

Գիտության, կրթության և տեխնիկայի բնագավառը երիտասարդ կադրերով համալրելու նախապայմանը գիտական կադրեր պատրաստելու պետական պատվերի ձևավորման մեխանիզմի հստակեցումն է, որը մի կողմից միտված կլինի գիտության մեջ իրենց ապագան պատկերացնող երիտասարդների ընտրությանը, մյուս կողմից՝ կնպաստի գիտական և գիտակրթական ավանդույթներ ունեցող և (կամ) բարձր գիտական արդյունք ապահովող կազմակերպությունների զարգացմանն ու գիտական ներուժի արդյունավետ վերարտադրությանը։ Անհրաժեշտ է գիտական և գիտակրթական կադրերի պատրաստման գործող եղանակները համալրել նորերով, մասնավորապես, մագիստրոսական և ասպիրանտական ուսուցումը ապագայում իրականացնել նաև ստեղծվելիք հետազոտական համալսարաններում։ Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ նմանատիպ համալսարաններում հնարավոր է անհամեմատ ավելի բարձր արդյունա-վետությամբ զուգակցել ասպիրանտական ուսուցման գիտական և կրթական բաղադրիչ-ները,

քանի որ միայն ակտիվ գիտական միջավայրում է հնարավոր պատրաստել բարձր որակավորում ունեցող և գիտության ժամանակակից պահանջներին համապատասխանող մասնագետներ։

Զուգահեռաբար պետք է իրականացնել ասպիրանտական կրթության՝ որպես բարձրագույն կրթության երրորդ աստիճանի բովանդակային բարեփոխումներ, մշակել ատենախոսությունների գիտական մակարդակի բարձրացմանը նպաստող մեխանիզմներ և ներդնել գիտական աստիճանաշնորհման առավել արդյունավետ համակարգ։ Այդ միջոցառումները պետք է զուգակցվեն երիտասարդ գիտնականների սոցիալ-տնտեսական, այդ թվում՝ աշխատանքի վարձատրության պայմանների բարելավման և նրանց կողմից կատարվող հետազոտությունների աջակցության մեխանիզմների ձևավորումով և ներդրումով։ Բացի այդ, ըստ հանրապետության գիտության և տեխնիկայի զարգացման գերակա ուղղությունների, անհրաժեշտ է մշակել միջազգային առաջատար կենտրոններում երիտասարդ կադրերի պատրաստման պետական ծրագիր։

Գիտության ոլորտում երիտասարդ կադրերի ներգրավման և գիտական ներուժի արդյունավետ վերարտադրման համար անհրաժեշտ է ապահովել գիտական աշխատողի՝ եվրոպական չափանիշներին մոտ աշխատանքի վարձատրություն, ինչպես նաև ձևավորել գիտնականի մասնագիտական կարիերայի զարգացման հստակ մեխանիզմներ, այն է՝ ասպիրանտուրա, հետդոկտորանտուրա, ժամանակավոր աշխատանք, մշտական աշխատանք և կենսաթոշակի անցնելուց հետո խորհրդատվական աշխատանք կատարելու իրավունք։ Այդպիսի սխեման ենթադրում է գիտական կազմակերպություններում մշտական և ժամանակավոր աշխատողների ինստիտուտների ներդրում (ինչպես ընդունված է բարձր գիտակրթական մակարդակ ունեցող շատ երկրներում) և մրցութային կարգով աշխատանքային կարիերայի հաջորդ մակարդակին անցնելու ու տարբեր կազմակերպությունների մրցույթներին մասնակցելու միջոցով աշխատանքային տեղի ընտրության հնարավորություն։

Գիտական ներուժի նպատակային վերարտադրությանն ուղղված միջոցառումները պետք է ուղեկցվեն գիտական աշխատանքներն արդյունավետ կատարելու համար համապատասխան պայմանների ապահովմամբ և գիտական աշխատողի մասնագիտական կարիերայի գրավչության բարձրացմամբ։ Դրանք կնպաստեն գիտության ոլորտից հեռացած կադրերի, առաջին հերթին օտարերկրյա պետություններում աշխատող հայազգի գիտնականների, վերադարձին և հնարավորինս կմեղմեն միջին սերնդի գիտնականների թվաքանակի «ճգնաժամիե հետևանքները։

Գիտության ոլորտի նյութատեխնիկական բազայի և ենթակառուցվածքների, այդ թվում, գիտատեղեկատվական ցանցի արդիականացումը, գիտական հետազոտությունների բարձրակարգ գիտատեղեկատվական հենքի ապահովումը և գիտահրատարակչական գործունեության նոր մեխանիզմների ներդրումն անհրաժեշտ է իրականացնել միասնական պետական նպատակային

ծրագրերի շրջանակներում։ Այդպիսի համակարգային ծրագրերի իրականացումը հնարավորություն կընձեռի արդիականացնելու, որոշ դեպքերում նաև՝ ստեղծելու գիտության ոլորտի նոր ենթակառուցվածքներ, բարձրացնելու գիտական սարքավորումների օգտագործման արդյունավետությունը, ստեղծելու եզակի և թանկարժեք հետազոտական սարքավորումների համատեղ օգտագործման կենտրոններ, օպտիմալացնելու գիտական սարքավորումների պահպանմանը հատկացվող ֆինանսական ծախսերը։ Անհրաժեշտ է ստեղծել ներհանրապետական գիտատեղեկատվական միասնական ցանց, բարձրացնել միջազգային գիտատեղեկատվական ցանցում հանրապետության գիտական և գիտակրթական կազմակերպությունների ինտեգրման աստիճանը և իրականացնել միջոցառումներ՝ ուղղված հանրապետական գիտական ամսագրերի մասնագիտական մակարդակի բարձրացմանն ու դրանց ընդգրկմանը միջազգային առաջատար գիտավերլուծական շտեմարաններում։

Մարտավարություն՝

1) Գիտական և գիտակրթական կադրերի պատրաստման գիտականորեն հիմնավորված պետական պատվերի ձևավորում։

2) Գիտական և գիտակրթական կադրերի պատրաստման համակարգի կատարելագործում, այդ թվում նաև՝ հետազոտական համալսարանների ստեղծում։

3) Միջազգային առաջատար գիտական, գիտակրթական և գիտատեխնիկական կենտրոններում մասնագետների պատրաստման մեխանիզմների մշակում։

4) Ասպիրանտական կրթության՝ որպես բարձրագույն կրթության երրորդ աստիճանի, բովանդակային բարեփոխումների ապահովում, գիտական աստիճանաշնորհման ժամանակակից համակարգի ձևավորում։

5) Ատենախոսություններին առաջադրվող պահանջների հստակեցում՝ ուղղված դրանց գիտական մակարդակի բարձրացմանը։

6) Գիտության ոլորտում երիտասարդ կադրերի ներգրավման և հաստատման մեխանիզմների մշակում։

7) Երիտասարդ գիտնականների սոցիալ-տնտեսական պայմանների բարելավման մեխանիզմների ներդրում (բնակարաններ ձեռք բերելու համար արտոնյալ պայմաններով հիպոտեկային վարկերի տրամադրում, աշխատավարձերի և հավելավճարների բաշխման ճկուն համակարգի ներդրում և այլն)։

8) Երիտասարդ գիտնականների խրախուսման, նրանց կողմից իրականացվող գիտահետազոտական աշխատանքներին աջակցության ապահովում։

9) Երիտասարդ գիտական կադրերի պատրաստումն արդյունավետորեն իրականացնող գիտական ղեկավարների, գիտական և (կամ) գիտակրթական կազմակերպությունների խրախուսման մեխանիզմների մշակում:

10) Գիտնականների և գիտական աշխատողների սոցիալ-տնտեսական պայմանների բարելավման մեխանիզմների ներդրում, գիտական աշխատանքների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ պայմանների ապահովում:

11) Օտարերկրյա պետություններում աշխատող հայազգի գիտնականների համար հանրապետություն վերադառնալու և գիտական աշխատանքն արդյունավետ շարունակելու պայմանների ապահովում:

12) Գիտության ոլորտի հեղինակության և գիտական աշխատողի մասնագիտական կարիերայի գրավչության բարձրացում:

13) Գիտության ոլորտի նյութատեխնիկական բազայի և ենթակառուցվածքների արդի վիճակի վերլուծություն և համապատասխան տվյալների բազայի ստեղծում:

14) Ըստ հանրապետության գիտության և տեխնիկայի զարգացման գերակա ուղղու-թյունների՝ գիտության ոլորտի նյութատեխնիկական բազայի և ենթակառուցվածքների արդիականացում:

15) Եզակի և թանկարժեք հետազոտական սարքավորումների համատեղ օգտագործման կենտրոնների ձևավորում և համապատասխան սպասարկման ծառայությունների ստեղծում:

16) Գիտական սարքաշինության, նոր նյութերի ստեղծման ծրագրերի մշակում և աջակցություն՝ արտադրության զարգացման ոլորտում դրանք ներդնելուն:

17) Ներհանրապետական միասնական գիտատեղեկատվական, այդ թվում՝ էլեկտրոնային միասնական գրադարանային ցանցի ստեղծում:

18) Միջազգային գիտատեղեկատվական ցանցն ազատորեն օգտագործելու համապատասխան պայմանների ապահովում:

19) Հանրապետական գիտական ամսագրերի մասնագիտական մակարդակի բարձրացման, միջազգային գիտավերլուծական առաջատար կայքերում դրանք ընդգրկելու և գիտահրատարակչական գործունեության արդիականացման աջակցության մեխանիզմների մշակում:

ԹԻՐԱԽ 3. Հիմնարար և կիրառական բնույթի՝ ներառյալ տնտեսության մեջ օգտագործվող գիտելիքի ձեռքբերմանն ուղղված հետազոտությունների խթանում

Հիմանարար և կիրառական բնույթի, ներառյալ տնտեսության մեջ օգտագործվող գիտելիքի ձեռքբերմանն ուղղված հետազոտությունների դինամիկ զարգացման համար անհրաժեշտ է, ըստ հանրապետության գիտության և տեխնիկայի զարգացման գերակա ուղղությունների, ապահովել

հիմնարար և կիրառական հետազոտությունների արդյունավետ պետական հովանավորություն։ Բացի այդ, անհրաժեշտ է մշակել տնտեսության մեջ կիրառական արդյունքների ներդրման մեխանիզմներ և ստեղծել պայմաններ՝ գիտական գործունեության մեջ տնտեսության մասնավոր հատվածի մասնակցությունը, հատկապես ներդրումային (վենչուրային) կապիտալի մուտքը խրախուսելու համար։

Հաշվի առնելով հիմնարար գիտության աշխարհայացքային դերը և նշանակությունը որպես կիրառական հետազոտությունների ու մշակումների հիմք՝ հարկավոր է առանձնահատուկ ուշադրություն դարձնել հիմնարար հետազոտությունների խթանմանն ու պետական աջակցությանը։ Նախ՝ առանց հիմնարար գիտության հնարավոր չէ ապահովել կրթության ողջ գործընթացը. գիտելիքի կուտակումն ու ընդլայնումն անընդհատ գործընթաց է, որտեղ որևէ սահման ընդհանրապես գոյություն չունի։ Երկրորդ՝ կիրառական գիտությունն իր տնտեսական արժեքով և ճկունությամբ հենվում ու սնվում է հիմնարար գիտության արդյունքներից. գիտելիքը կամ նրա հիման վրա ստեղծված տեխնոլոգիաները ժամանակի ընթացքում «ծերանումե են, և տնտեսության զարգացման համար նոր մեթոդների առաջարկի անհրաժեշտություն է առաջանում։ Երրորդ՝ առանց հիմնարար գիտության, թարմ կամ ինովացիա պարունակող գաղափարներ չեն առաջանում, չեն լինում ոչ՝ նոր տեխնոլոգիաների «ծիլերե, ոչ՝ էլ դրանց հայտնաբերման «հոտառությունե։ Չի լինում նաև այն գիտական միջավայրը, որն ի զորու է իրականացնելու նոր տեխնոլոգիաների «տեղափոխումըե կիրառական հետազոտությունների հարթություն նույնիսկ այն դեպքում, երբ դրանք մեզ տրամադրվեն ուրիշների կողմից։ Բացի այդ, հիմնարար գիտությունն ունի նաև հասարակության ընդհանուր մշակութային մակարդակը բարձրացնելու առաքելություն։ Զարգացած երկրների փորձը ցույց է տալիս, որ հիմնարար գիտության մեջ ներդրված միջոցները տասնապատիկ ետ են վերադարձվում, օրինակ, պակասում են հասարակության արատավոր երևույթները վերացնելու ուղղությամբ ծախսվող ֆինանսական հատկացումները։

Հիմնարար հետազոտությունների աջակցության ծրագիր մշակելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ հիմնարար գիտությունը միաժամանակ համամարդկային արժեք ունեցող և աշխարհում տվյալ պետության տեղն ու դերը պայմանավորող կատեգորիա է։ Զարգացած հիմնարար գիտություն ունեցող պետության կապիտալը բարձր որակավորում ունեցող մասնագետ հետազոտողներն են, կրողը և օգտագործողը՝ հասարակության յուրաքանչյուր անդամը։

Սահմանափակ բնական ռեսուրսներ և գիտական ու գիտատեխնիկական տարածք ունենալու փաստը, ինչպես նաև նմանատիպ, բայց զարգացած երկրների փորձը ցույց է տալիս, որ հանրապետության տնտեսության մեջ գիտական հետազոտությունների արդյունքների և առաջատար տեխնոլոգիաների ներդրման հարցում վճռորոշ դերը պետք է պատկանի պետությանը։ Գիտահետազոտական արդյունքների կիրառումը շատ հաճախ պահանջում է

համեմատաբար երկար ժամանակ, դժվար է կանխատեսել դրանց շահութաբերությունը և, հետևաբար, տնտեսության մասնավոր ոլորտը ոչ միշտ է պատրաստ նմանատիպ ռիսկային ներդրումների։ Այդպիսի մոդելի համատեքստում բացառիկ կարևորություն է ձեռք բերում պետական միասնական քաղաքականության իրականացումը, որը հնարավորություն կընձեռի բացառելու կիրառական հետազոտությունների թեմաների կրկնությունները, օպտիմալացնելու ոլորտում ներգրավված գիտական կազմակերպությունների թիվը, կենտրոնացնելու պետական և ոչ պետական ռեսուրսները տնտեսության առաջադրած գիտատեխնիկական խնդիրների լուծման վրա։ Այս տեսանկյունից՝ պետա-կան նպատակային ծրագրերը պետք է ուղղված լինեն տնտեսության այս կամ այն ոլորտի կոնկրետ խնդիրների լուծմանը և կազմվեն գիտության ոլորտում պետական քաղաքականությունը մշակող ու իրականացնող պետական մարմնի, Գիտությունների ազգային ակադեմիայի և շահագրգիռ գերատեսչությունների կողմից։

Մարտավարություն՝

1) Գիտության և տեխնիկայի զարգացման գերակա ուղղությունների շրջանակներում իրականացվող հիմնարար հետազոտություններին աջակցություն։

2) Տեխնոլոգիաների բեկումնային զարգացումն ապահովող հիմնարար հետազոտությունների պետական աջակցության առաջնայնությունների մշակում։

3) Հիմնարար գիտությունների ոլորտում ժամանակի չափանիշներին համապատասխան տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացում։

4) Երկրի ներսում և միջազգային ասպարեզում հայրենական հիմնարար և կիրառական գիտական ուղղությունների աջակցության ապահովում։

5) Կիրառական հետազոտությունների պետական պատվերի ձևավորում, տնտեսության մեջ կիրառական հետազոտությունների արդյունքների ներդրման մեխանիզմների մշակում։

6) Գիտական հետազոտությունների և մշակումների բնագավառում տնտեսության մասնավոր հատվածի մասնակցության պայմանների ստեղծում։

7) Կիրառական հետազոտությունների արդի ենթակառուցվածքների և գիտակրթական միջավայրի ձևավորում, միջազգային համագործակցության խթանում, մասնավորապես, համաֆինանսավորման սկզբունքով միջազգային համատեղ հետազոտական լաբորատորիաների ստեղծում։

8) Կիրառական բնույթի պետական նպատակային ծրագրերի մշակում։

9) Բնական, հատկապես՝ հողային, ջրային և անտառային պաշարների օգտագործման արդյունավետության բարձրացմանն ուղղված նպատակային հետազոտությունների խթանում։

10) Բնապահպանական անվտանգության բարձրացմանը, հատկապես Սևանա լճի պահպանմանն ու դրա պաշարների օպտիմալ օգտագործմանն ուղղված հետազոտություններին աջակցություն:

11) Էներգետիկ անվտանգության մակարդակի բարձրացման, այդ թվում՝ էներգետիկ անկախության և այլընտրանքային էներգիայի աղբյուրներ որոնելու հետազոտական աշխատանքների զարգացում:

12) Հանրապետության բնակչության կենսաբանական անվտանգության և երկրի պարենային անվտանգության մակարդակի բարձրացմանն ուղղված իրականացվող հետազոտություններին աջակցություն:

13) Հետազոտական զբոսաշրջության զարգացմանը նպաստող միջոցառումներին աջակցություն:

ԹԻՐԱԽ 4. Կրթության, գիտության, տեխնոլոգիաների և ինովացիայի ներդաշնակ համակարգի ձևավորում, տնտեսական և հասարակական զարգացումներում գիտական հետազոտությունների դերակատարման աճի ապահովում

Գիտելիքի վրա հիմնված հասարակությունում գիտելիքը և մասնագիտական հմտությունը (որակավորումը) համարվում են զարգացման ամենակարևոր ռազմավարական ռեսուրսը, իսկ պետական կառավարման, տնտեսական, սոցիալական և բնապահպանական ոլորտի նպատակները ձեռք են բերվում գիտելիքի, վերլուծության, քննարկումների և համագործակցության հիման վրա: Սակայն գիտելիքը և հմտությունը տնտեսության ու հասարակության առաջադիմության ռազմավարական գործոն կարող են դառնալ, եթե անհրաժեշտ մակարդակով խթանվեն հիմնարար և կիրառական հետազոտությունները, ստեղծվի կրթության, գիտության, տեխնոլոգիաների և ինովացիայի ներդաշնակ, ինքնավերարտադրվող համակարգ, ներդրվեն գիտական հետազոտությունների և մշակումների արդյունքների կիրառման հստակ մեխանիզմներ և հասարակության մեջ ձևավորվի այնպիսի մթնոլորտ, որ ինչպես տնտեսական, այնպես էլ հասարական նպատակների նախանշումը և ձեռքբերումը իրականացվի գիտական վերլուծությունների ու քննարկումների հիման վրա:

Գիտելիքահենք հասարակության զարգացման հիմքը հանդիսացող նորագույն տեխնոլոգիաները (տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաներ, կենսատեխնոլոգիաներ, նանոտեխնոլոգիաներ, նոր նյութերի ստացման տեխնոլոգիաներ և այլն) խորն ազդեցություն ունեն տնտեսական զարգացման տեմպերի վրա, փոխարինում կամ բարելավում են արդեն իսկ գոյություն ունեցող տեխնոլոգիաները և խթանում են նորերի զարգացումը: Սակայն, արդի ժամանակներում տնտեսական հաջողությունների մեջ որոշիչ դերը պատկանում է ոչ թե պարզ վերարտադրությանը, այլ հասարակության մեջ ստեղծագործ միջավայրի ձևավորման և

ներդրման մակարդակին։ Այն հասարակությունը, որն ընդունակ է ստեղծելու կրթության, գիտության, տեխնոլոգիաների և ինովացիայի սիներգետիկ համակարգ, երբ փոխգործակցության շնորհիվ համակարգի ընդհանուր արդյունքն ավելի մեծ է, քան նրա մասերի արդյունքների գումարը, տնտեսական աճի ավելի լավ հեռանկարներ ունի։ Այդպիսի համակարգի ձևավորումը ենթադրում է ոլորտի կազմակերպման ուղղահայաց մոդելից անցում հորիզոնականի, որը, կայուն համակարգ լինելով, բաղկացած կլինի ոչ կայուն տարրերից։ Ընդ որում, նմանատիպ համակարգի գործունեության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է հիմնարար հետա-զոտություններից մինչև գիտատեխնիկական արդյունքների օգտագործում շղթայում տնտեսության մասնավոր հատվածի ներգրավվածության մակարդակով և հասարակության գիտակցության մեջ գիտության դերի ու հեղինակության աստիճանով։

Մարտավարություն՝

1) Գիտական և գիտատեխնիկական ոլորտի կառավարման և զարգացման նոր, կայուն համակարգի ձևավորում։

2) Հասցեագրված հետազոտությունների խթանման մեխանիզմների մշակում՝ ապահովելով հետազոտությունների առարկայական դասակարգման (ըստ ուղղությունների) սկզբունքից անցումը պրոբլեմայինի (ըստ խնդիրների)։

3) Գիտական արդյունքների, այդ թվում՝ տեխնոլոգիաների ապրանքային ձևերի սահմանում, դրանց ըստ ոլորտների և բնագավառների համակարգման ու կիրառման պատասխանատու պետական մարմինների լիազորությունների հստակեցում։

4) Գիտական նորամուծությունների ոլորտում ձեռներեցության ներգրավվածության աստիճանի բարձրացման ապահովում, գիտական կազմակերպությունների համար նպաստավոր տնտեսական միջավայրի, այդ թվում՝ արտոնյալ վարկերի տրամադրման մեխանիզմների ձևավորում։

5) Գիտական նորամուծությունների կենտրոնների ստեղծում, այդ թվում՝ նաև պետական և ոչ պետական գիտահետազոտական կազմակերպությունների հիմքի վրա։

6) Գիտատեխնիկական ոլորտում վենչուրային ներդրումների խրախուսում, նորամուծության ռիսկերի ապահովագրության մեխանիզմների ձևավորում։

7) Պետության դերակատարության ակտիվացում՝ գյուտարարների ստեղծագործական գործունեության արդյունքների արտոնագրերի վաճառքի և օտարերկրյա պետություններում արտոնագրելու հարցում։

8) Գիտահետազոտական կազմակերպությունների մի մասի վերակազմավորում ինովացիոն կազմակերպությունների՝զարգացած մարքեթինգային և կոմերցիոն կառույցներով։

9) Կրթության, գիտության, տեխնոլոգիաների և ինովացիայի փոխգործակցող, ներդաշնակ համակարգի ձևավորում։

10) Պետական կառավարման, տնտեսության, սոցիալական և բնապահպանական ոլորտի նպատակների նախանշման, դրանց հասնելու ուղիների ընտրության և իրագործման գործընթացում գիտելիքի, վերլուծության, քննարկումների և համագործակցության մեխանիզմների մշակում։

ԹԻՐԱԽ 5. Հայագիտության ոլորտի առաջնային զարգացում

Հայագիտության և հասարակական գիտությունների զարգացման խթանումը պետք է դառնա պետության ազգային քաղաքականության կարևորագույն ուղղություններից մեկը՝ կոչված պահպանելու ինչպես ժողովրդի ազգային նկարագիրը, այնպես էլ սերունդներին կրթելու, հայեցի դաստիարակելու և հայրենիքին նվիրված քաղաքացիներ պատրաստելու առաքելությունը։ Գիտության հայագիտական ճյուղերը պետք է նպատակաուղղվեն Հայաստանի Հանրապետության անկախ պետականության կայացմանն ու հզորացմանը, նպաստեն հայոց ազգային գաղափարախոսության ձևավորմանը, դառնան ազգային ու մշակութային անվտանգության ապահովման հզոր գործոն։

Այս հարցում իր կարևորագույն համակարգող դերակատարումը պետք է ունենա ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան։

Հայագիտության զարգացումը պահանջում է բազմաթիվ հիմնարար և կիրառական խնդիրների լուծում, ինչը հնարավոր է միայն այն դեպքում, երբ այն հիրավի դառնա պետական հատուկ հոգածության առարկա՝ ստանալով արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ միջոցներ ու պայմաններ։ Ոլորտում հրատապ խնդիր է դարձել միասնական հայագիտական ցանցի ստեղծումը հայաստանյան և օտարերկրյա պետությունների, առաջին հերթին սփյուռքի հայագետների ներգրավմամբ՝ երիտասարդ մասնագետների պատրաստման, վերապատրաստման և փոխանակման, ինչպես նաև միջազգային չափանիշներին համապատասխանող գիտական հանդես հրատարակելու առումներով։ Այդ մոտեցումը հնարավորություն կտա հաշվի առնել և կիրառել թեմաների ընտրության ու գիտական վերլուծությունների մեթոդաբանության արդի միջազգային չափանիշները, բարձրացնել գիտական հետազոտությունների մասնագիտական մակարդակը և կնպաստի հայագիտությունը միջազգային նշանակության գիտական ուղղություն դառնալուն։ Անչափ կարևոր են նաև Հայաստանի Հանրապետության անմիջական հարևան ժողո-վուրդների պատմության, մշակույթի ու լեզվի ուսումնասիրությունները։

Հայագիտության առջև ծառացած խնդիրների արդյունավետ լուծման համար պետք է մշակել և իրականացնել պետական ռազմավարական ծրագիր՝ կոչված ապահովելու հայագիտության

գերակա ճյուղերի միջնաժամկետ ու երկարաժամկետ զարգացումը: Միայն պետական ու գիտականորեն հիմնավորված մոտեցումներով է հնարավոր Հայաստանի Հանրապետությունը որպես հայագիտության կենտրոն պահպանելու և հետագա զարգացումն ապահովելու հեռանկարը:

Մարտավարություն՝

1) Հայագիտության զարգացման ռազմավարության ու պետական պատվերի մանրամասն և հիմնավորված երկարաժամկետ ծրագրի մշակում:

2) Հայագիտության բնագավառում նոր գիտական ու գիտակրթական ենթակառուցվածքների ստեղծում և զարգացում, հայագիտական կենտրոնների ստեղծում ՀՀ մարզերում և արտասահմանում: Հայոց լեզուն, հայ ժողովրդի պատմությունը, ծագումնաբանությունն ու պատմամշակութային ժառանգությունը համաշխարհային հանրությանը ներկայացնելու ապահովում:

3) Հայագիտության բնագավառում միջազգային համագործակցությունը խթանող մեխանիզմների ձևավորում, այդ թվում՝ օտարերկրյա գիտական կենտրոններում երիտասարդ կադրերի պատրաստում և Հայաստանի Հանրապետությունում հայագետ օտարերկրյա կադրերի վերապատրաստում:

4) Օտարերկրյա պետությունների հետ համագործակցության խթանում, այդ թվում՝ նրանց տարածքում գտնվող հայկական պատմական, հոգևոր ու մշակութային արժեքների պահպանման և հետազոտման աշխատանքներին նպաստում:

5) Սփյուռքում հայապահպանության ուղղությամբ միջազգային համագործակցության խթանում: Սփյուռքի պատմության, արդի վիճակի խորը ուսումնասիրություն, արևմտահայերենի և արևելահայերենի մերձեցման ուղիների մշակում՝ բացառելով ուղղագրության փոփոխության հարցերը:

6) Արտերկրում գործող հայագիտական կենտրոնների աջակցության և համագործակցության մեխանիզմների մշակում:

7) Հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի ստեղծում:

ԹԻՐԱԽ 6. Միջազգային գիտական և գիտատեխնիկական համագործակցության զարգացում, համաշխարհային գիտական, գիտակրթական և գիտատեխնոլոգիական տարածքում սեփական դիրքի ձեռքբերում ու հաստատում

Ժամանակակից գիտության առջև ծառացած հիմնահարցերի մեծ մասը, ինչպիսիք են, օրինակ՝ համամոլորակային (գլոբալ) կլիմայի փոփոխությունները, պարենային և էներգետիկ անվտանգությունը, վարակիչ հիվանդությունները, հիմնարար և կիրառական խոշորամասշտաբ

խնդիրները և այլն, համընդհանուր մարտահրավերներ են, և դրանց լուծումները նույնպես պահանջում են համընդհանուր պատասխան միջոցառումներ։ Համաշխարհային կարևորության շատ գիտական հետազոտություններ հնարավոր է իրականացնել միայն խոշորամասշտաբ համագործակցությունների շրջանակներում. դրանք հաճախ պահանջում են ֆինանսական և մարդկային ռեսուրսների այնպիսի կենտրոնացում, որը դուրս է ցանկացած՝ նույնիսկ տնտեսապես ամենազարգացած երկրի հնարավորությունների սահմաններից։ Միջազգային համագործակցությունը մատչելի է դարձնում հետազոտությունների ավելի լայն շրջանակ, ռեսուրսներ և ենթակառուցվածքներ, նպաստում է հետազոտողների մոտ նոր գաղափարների և մոտեցումների ձևավորմանը, հնարավորություն է տալիս նրանց համեմատելու իրենց աշխատանքը բնագավառի լավագույնների հետ ու արդյունքում՝ բարձրացնելու մասնագիտական մակարդակը։ Այդ գործոնների պատճառով գիտության և տեխնիկայի բնագավառում միջազգային համագործակցությունը ներկայում դառնում է ավելի կարևոր, քան երբևէ, և յուրաքանչյուր երկրի գիտական գործունեության արագ աճող բաղկացուցիչ մասն է։

Այս կամ այն երկրի համար գիտության ոլորտում միջազգային համագործակցության հաջողված լինելը մեծապես պայմանավորված է այդ երկրի գիտատեխնիկական ներուժի մակարդակով. պետք է հաշվի առնել ինչպես տեղական, այնպես էլ համընդհանուր հիմնահարցերի անհրաժեշտությունը և առաջնահերթությունները։ Միջազգային գիտական համագործակցության շարժիչ ուժը համընդհանուր նպատակների զուգակցումն ու ներդաշնակությունն է։ Ըստ էության, պետք է հիմնականում խթանել այն միջազգային ծրագրերը, որոնք նպաստելու են այնպիսի ուժեղ գիտական բազայի զարգացմանը կամ ստեղծմանը, որն ընդունակ է ծրագրի ավարտից հետո երկար ժամանակ բավարարելու գիտության, հասարակության և տնտեսության պահանջները։

Միջազգային համագործակցությունը հնարավորություն է ընձեռում մասնակցելու գիտության և տեխնիկայի համաշխարհային մակարդակի առաջնային հիմնախնդիրների լուծմանը, բարձրացնելու հանրապետության գիտական և գիտատեխնիկական ներուժի մասնագիտական մակարդակը, ինտեգրվելու միջազգային գիտական, գիտակրթական և գիտատեխնիկական տարածք, ինչպես նաև պատրաստելու բարձր մասնագիտական որակավորում ունեցող կադրեր, պահպանելու հանրապետության ուրույն տեղը միջազգային ասպարեզում կամ ձեռք բերելու նորը։ Կարևորագույն խնդիր է գիտական, գիտատեխնիկական և ինովացիոն ոլորտներում միջազգային իրավահավասար և փոխշահավետ գործակցության զարգացման համար բարենպաստ պայմանների ու մեխանիզմների (կառույցների) ստեղծումը։

Սահմանափակ բնական պաշարներ ունեցող երկրի զարգացման կարևորագույն պայմաններից մեկը գիտական և տեխնոլոգիական գործունեության բնագավառներում նշանակալի առաջընթաց ապահովելն է։ Գիտական, գիտակրթական և գիտատեխնոլոգիական տարածքում

ինքնահաստատման համար անհրաժեշտ է իրականացնել միջազգային մակարդակին համապատասխանող խոշորամասշտաբ, բեկումնային ծրագրեր (կամ ծրագիր՝ ըստ տնտեսական նպատակահարմարության), որոնք կզարգացնեն տվյալ ուղղությանը հարակից այլ գիտական և գիտատեխնիկական ճյուղեր, կառաջադրեն նոր պահանջներ և լուծումներ կրթությանը, գիտությանը և տնտեսությանը, նոր թափ կհաղորդեն հանրապետության գիտության ու տեխնիկայի զարգացմանն ընդհանրապես։ Այդպիսի հավակնոտ ծրագրերի (ծրագրի) իրականացումը կնպաստի, որ հանրապետությունը բարձր կրթական մակարդակ և որակավորում ունեցող մասնագետներ «արտահանողե երկրից վերածվի «ներմուծողիե, արդյունքում հնարավոր կլինի պահպանել և զարգացնել միջազգային մակարդակին համապատասխանող գիտական դպրոցները կամ ստեղծել նորերը։

Բացի դրանից, գիտելիքի ստեղծման, առաջատար տեխնոլոգիաների կամ գիտատար արտադրության գծով համաշխարհային շուկայում ուրույն տեղը և դերը կապահովի գիտելիքի առևտրայնացման համար համապատասխան շուկայի առկայությունը, առավելագույնս կխթանի հանրապետության տնտեսության և հետևաբար նաև՝ հասարակության առաջընթաց զարգացումը։ Նպատակին հասնելու արդյունավետ ճանապարհն ակտիվ պետական քաղաքականության մշակումն ու իրականացումն է, որը ենթադրում է գիտության և առաջատար տեխնոլոգիաների ոլորտում ռեսուրսների կենտրոնացում և ոլորտի նկատմամբ պետական հովանավորչության ապահովում՝ համապատասխան հարկային, մաքսային արտոնությունների տրամադրում, ոլորտում ազատ ձեռ-ներեցության խթանում, պետական և ոչ պետական վենչուրային հիմնադրամների ձևա-վորման խրախուսում և այլն։

Մարտավարություն՝

1) Հանրապետության գիտության և տեխնիկայի զարգացման գերակա ուղղություն-ների շրջանակներում հիմնարար և կիրառական նշանակության հետազոտությունների (այդ թվում նաև՝ միտված գիտական արդյունքի առևտրայնացմանը) ընդլայնմանն ուղղված միջազգային համագործակցության պետական ծրագրի մշակում։

2) Համապատասխան չափանիշների և չափորոշիչների սահմանմամբ միջազգային համագործակցությանը հանրապետության գիտական և գիտակրթական կազմակերպու-թյունների մասնակցության աջակցության մեխանիզմների մշակում։

3) Համատեղ միջազգային գիտական կենտրոնների, լաբորատորիաների, գիտակրթական և գիտաարտադրական կառույցների ստեղծում, այդ թվում՝ խթանելով հայրենական գիտական և գիտատեխնիկական արդյունքների արտահանումը միջազգային շուկա։

4) Միջազգային համագործակցության շրջանակներում մասնագետների պատրաստման մեխանիզմների մշակում՝ ըստ հանրապետության գիտության և տեխնիկայի զարգացման գերակա ուղղությունների։

5) Արտերկրում աշխատող հայ գիտնականների գիտելիքների, փորձի և հնարավորությունների օգտագործման գործուն համակարգի ձևավորում։

6) Գիտության և տեխնիկայի զարգացման համաշխարհային կանխատեսումների համատեքստում հանրապետության գիտական և գիտատեխնիկական հնարավորություն-ների ներկա վիճակի ու զարգացման հեռանկարի գնահատում։

7) Հանրապետության տնտեսության համար բեկումնային նշանակություն ունեցող գիտական և գիտատեխնիկական խնդիրների ձևակերպում, համապատասխան պետական ծրագրերի (ծրագրի) մշակում։

8) Բեկումնային նշանակություն ունեցող ծրագրերի (ծրագրի) իրականացման համար կադրերի նպատակային պատրաստման մեխանիզմների մշակում՝ ներառյալ արտերկրում մասնագետների պատրաստում և վերապատրաստում՝ օգտագործելով նաև սփյուռքի հնարավորությունները։

9) Կարևորագույն նշանակություն ունեցող ծրագրերի (ծրագրի) իրականացման ապահովում։

6. ԱՄՓՈՓՈՒՄ

Ռազմավարության նպատակներին հասնելու համար կմշակվեն համապատասխան փոփոխություններ և լրացումներ՝ «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասինե Հայաստանի Հանրապետության օրենքում։

Մշակվելու է նաև հայագիտության բնագավառի առաջընթաց զարգացումն ապահովող առանձին ռազմավարական ծրագիր, որում պետք է զուգակցվեն Հայաստանի Հանրապետության կառավարության, մասնավոր բիզնեսի, քաղաքացիական հասարակության և սփյուռքի ջանքերն ու գիտական ներուժը։

Ռազմավարությունն ընտրված թիրախներին հասնելու հնգամյա ռազմավարական ծրագրերի (2011-2015 և 2016-2020 թվականների համար) և համապատասխան ժամանա-կացույցի մշակման հիմք կհանդիսանա, որտեղ յուրաքանչյուր մարտավարության շրջանակում կամրագրվեն հասցեական գործողություններ, պետական պատասխանատու մարմիններ և անհրաժեշտության դեպքում՝ օրենսդրական փաթեթներ։

ՑԱՆԿ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

Միջոցառման անվանում	Նպատակ/արդյունք	Կատարող	Ժամկետ
1	2	3	4
1. Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման 2011–2015 թվականների ռազմավարական ծրագրի և միջոցառումների ժամանակացույցի մշակում:	ՀՀ գիտության ոլորտի զարգացման 2011–2015 թվականների ռազմավարական ծրագրի իրականացման գիտականորեն հիմնավորված մեխանիզմների և համապատասխան իրավական հիմքերի մշակում՝ ոլորտի զարգացման գիտատեխնիկական Ֆորսայթ վերլուծության հիման վրա:	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ	2010թ.
2. Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման 2011–2015 թվականների ռազմավարական ծրագրի և միջոցառումների ժամանակացույցի հասարակական քննարկումների կազմակերպում:	ՀՀ գիտության ոլորտի զարգացման 2011–2015 թվականների ռազմավարական ծրագրի և միջոցառումների ժամանակացույցի մշակման գործընթացում գիտական լայն հասարակայնության ներգրավում:	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ	2010թ.
3. «Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման 2011–2015 թվականների ռազմավարական ծրագիրը և միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ներկայացում Հայաստանի Հանրապետության կառավարություն:	ՀՀ գիտության ոլորտի զարգացման 2011–2015 թվականների ռազմավարական ծրագրի իրականացման իրավական հիմքերի ապահովում:	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե	2010թ.
4. Հայագիտության զարգացման ռազմավարական ծրագրի և միջոցառումների ժամանակացույցի մշակում:	Հայագիտության առաջընթաց զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման մեխանիզմների և համապատասխան իրավական հիմքերի մշակում՝ հայագիտության ներկա վիճակի վերլուծության, առկա հիմնախնդիրների ձևակերպման և դրանց լուծումների հիման վրա:	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ	2010թ.
1	2	3	4

5. Հայագիտության զարգացման ռազմավարական ծրագրի և միջոցառումների ժամանակացույցի հասարակական քննարկումների կազմակերպում։	Հայագիտության առաջընթաց զարգացման ռազմավարական ծրագրի և միջոցառումների ժամանակացույցի մշակման գործընթացում գիտական լայն հասարակայնության ներգրավում։	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ	2010թ.
6. «Հայագիտության զարգացման ռազմավարական ծրագիրը և միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասինե Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ներկայացում Հայաստանի Հանրապետության կառավարություն։	Հայագիտության զարգացման ռազմավարական ծրագրի իրականացման իրավական հիմքերի ապահովում։	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե	2010թ.
7. Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման 2016–2020 թվականների ռազմավարական ծրագրի և միջոցառումների ժամանակացույցի մշակում։	ՀՀ գիտության ոլորտի զարգացման 2016–2020 թվականների ռազմավարական ծրագրի իրականացման գիտականորեն հիմնավորված մեխանիզմների և համապատասխան իրավական հիմքերի մշակում՝ ՀՀ գիտության ոլորտի զարգացման 2011–2015 թվականների ռազմավարական ծրագրի իրականացման արդյունքների գնահատման հիման վրա։	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ	2015թ.
8. Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման 2016–2020 թվականների ռազմավարական ծրագրի և միջոցառումների ժամանակացույցի հասարակական քննարկումների կազմակերպում։	ՀՀ գիտության ոլորտի զարգացման 2016–2020 թվականների ռազմավարական ծրագրի և միջոցառումների ժամանակացույցի մշակման գործընթացում գիտական լայն հասարակայնության ներգրավում։	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հետ համատեղ	2015թ.
9. «Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման 2016–2020 թվականների ռազմավարական ծրագիրը և միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասինե Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ներկայացում Հայաստանի Հանրապետության կառավարություն։	ՀՀ գիտության ոլորտի զարգացման 2016–2020 թվականների ռազմավարական ծրագրի իրականացման իրավական հիմքերի ապահովում։	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտե	2015թ.

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆԵ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գիտության ոլորտի զարգացման ռազմավարությունը մշակվել է ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հունվարի 15-ի թիվ 40-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի 149-րդ կետի, հիմնվում է «Հայաստանի Հանրապետությունում գիտության ոլորտի բարեփոխումների հայեցա-կարգային դրույթներիե վրա և բխում է «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունիցե։

Գիտության ոլորտի զարգացման ռազմավարության նպատակը 2010-2020 թվականներին Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի առաջընթաց և դինամիկ զարգացումն ապահովելն է։

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում գիտական, գիտակրթական և գիտատեխնիկական գործունեությամբ զբաղվում են ավելի քան 100 կազմակեր-պություններ, որոնք ներկայացնում են Գիտությունների ազգային ակադեմիան և 10-ից ավելի գերատեսչություններ։ Պետական բյուջեից ֆինանսավորվող գիտական ծրագրերի և թեմաների իրականացման գործում ներգրավված են շուրջ 7.5 հազար գիտնականներ և գիտական աշխատողներ։ Անկախության տարիներին նշանակալի չափով պահպանվել է Հայաստանի Հանրապետության գիտական ներուժը, ի հայտ են եկել ոչ պետական գիտական կազմակերպություններ և գիտական հիմնադրամներ, ներդրվել է պետական բյուջեից գիտական ծրագրերի և թեմաների մրցութային ու ծրագրային ֆինանսավորման համակարգը, ընդլայնվել է գիտական կազմակերպությունների ինքնուրույնությունը, միջազգային գիտական և գիտատեխնիկական համագործակցությունը։ Ձևավորվել է օրենսդրական և նորմատիվ-իրավական դաշտ։ Գիտության ոլորտում պետական քաղաքականության հիմնական սկզբունքները ձևակերպվել են «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասինե ՀՀ օրենքում (ընդունվել է 2000թ. դեկտեմբերին), «Հայաստանի Հանրապետությունում գիտու-թյան ոլորտի բարեփո-խումների հայեցակարգային դրույթներումե (ՀՀ կառավարության կողմից հավանության

է արժանացել 2007թ. փետրվարին)։ Սակայն գիտության ոլորտում կուտակվել են բազմաթիվ խնդիրներ, որոնք առաջնահերթ լուծումներ են պահանջում։

Գիտության և առաջատար տեխնոլոգիաների բնագավառի քաղաքականության մշակումը և աշխատանքների կազմակերպումը չեն իրականացվում մեկ միասնական մարմնի կողմից. փաստորեն չի գործում հիմնարար հետազոտություններ-կիրառա-կան հետազոտություններ-ինովացիոն գործունեություն շղթան։ Արդյունավետ չէ գիտական կազմակերպություններին հանրապետության տնտեսության պահանջներից և զարգացման հեռանկարներից բխող հետազոտությունների պատվերը, գործնականում բացակայում է գիտական և գիտատեխնիկական գործունեության բնագավառում տնտեսության մասնավոր հատվածի մասնակցության մեխանիզմը։ Առկա գիտական ենթակառուցվածքները չեն ապահովում գիտական ներուժի արդյունավետ օգտագործումը։ Ներկայիս գիտական սարքավորումների բացարձակ մեծամասնությունը հնացած է, նրանց տեխնիկական մակարդակը հնարավորություն չի տալիս իրականացնելու գիտական հետազոտությունների բարձր մակարդակի, հատկապես փորձարարական բնույթի հետազոտություններ։ Պետության կողմից գիտությանը կոնկրետ ձևակերպված և հաստեագրված պատվերների բացակայությունը, գիտական արդյունքի առևտրայնացման ցածր մակարդակը, ինովացիոն գործունեության համար համապատասխան պայմանների, գիտական արդյունքների ներդրման արդյունավետ համակարգի դանդաղ ձևավորումը նույնպես խոչընդոտում են ոլորտի զարգացմանը։ Գիտական ներուժի վերարտադրությանը նպատակաուղղված քաղաքականության բացակայությունը հանգեցնում է գիտական կազմակերպություններում և բուհերում գիտական և գիտամանկավարժական կադրերի երիտասարդացման անբավարար մակարդակին։ Շարունակվում է որակյալ գիտական կադրերի, առաջին հերթին երիտասարդների արտահոսքը գիտության ոլորտից, այդ թվում՝ արտերկիր։ Միջազգային գիտական և գիտատեխնիկական համագործակցությունը անբավարար է կազմակերպված։ Բացասական երևույթներից են նաև միասնական գիտական տեղեկատվական համակարգի, գիտության և կրթության ինտեգրման անբավարար մակարդակը։ Գիտության ոլորտում ստեղծված նմանօրինակ վիճակի հիմնական պատճառներից են պետական բյուջեից ֆինանսավորման փոքր ծավալները և դրա օգտագործման ցածր արդյունավետությունը։

Ռազմավարության իրականացումը հնարավորություն կտա արդիականացնել գիտության ոլորտի նյութատեխնիկական բազան և ենթակառուցվածքները, ապահովել երիտասարդ կադրերի ներհոսք գիտության ոլորտ և արդյունավետ սերնդափոխություն, հիմնարար գիտական հետազոտությունների արդյունավետ պետական հովանավորություն և առաջընթաց զարգացում, աջակցել կիրառական բնույթի հետազոտությունների իրականացմանը, ձևավորել գիտության, տեխնոլոգիաների և ինովացիոն ոլորտի զարգացումն ապահովող ներդաշնակ համակարգ, էապես բարձրացնել գիտության և տեխնոլոգիաների բնագավառում միջազգային համագործակցության աստիճանը:

Ռազմավարության նպատակներին հասնելու համար կմշակվեն համապատասխան փոփոխություններ և լրացումներ «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասինե ՀՀ օրենքում: Ռազմավարությունը հիմք կհանդիսանա Հայաստանի Հանրապետության գիտության ոլորտի զարգացման ռազմավարական ծրագրերի և համապատասխան ժամանակացույցի, ինչպես նաև անհրաժեշտ իրավական փաստաթղթերի մշակման համար, որտեղ ընտրված թիրախների ուղղությամբ ձևակերպված մարտավարությունների շրջանակներում կամրագրվեն հասցեագրված գործողություններն ու պատասխանատու պետական մարմինները:

Հայագիտության բնագավառի առաջընթաց զարգացումն ապահովելու նպատակով մշակվելու է նաև առանձին ռազմավարական պետական ծրագիր, որտեղ պետք է զուգակցել Հայաստանի Հանրապետության կառավարության, քաղաքացիական հասարակության, համազգային կառույցների և սփյուռքի ջանքերն ու գիտական ներուժը:

Ռազմավարության իրականացումը հնարավորություն կընձեռի հնարավորինս սահուն ընդգրկվել համաեվրոպական գիտատեխնիկական, գիտակրթական և տնտեսական տարածք, կնպաստի միջազգային շուկայում հայրենական տնտեսության ուրույն տեղի ձեռքբերմանը, մրցակցային դիրքերի ամրապնդմանը և Հայաստանի Հանրապետությունում գիտելիքի վրա հիմնված տնտեսություն ստեղծելուն:

Արմեն Աշոտյան